# ՉԷԻ ՈՒԶՈՒՄ ԱՄՈԹԱՀԱՐ ԱՊՐԵԼ

## *ԱՐՑԱԽՑԻ ԴԱՐՁԱԾ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ*

Արցախի կռիվը բոլորինս է ու յուրաքանչյուրինս: Նաեւ Մուսալեռում ծնված, Փարիզում պատանությունն անցկացրած եւ Մարտակերտում մշտական բնակություն հաստատած Սարգիս Հայքանյանինը: Իրավաբանի ու կինոռեժիսորի մասնագիտությունները չորս տարի է փոխարինել է Հայի գործով:

Սարգիսին խմբագրություն էր բերել իր հրամանատարի՝ Լեոնիդ Ազգալդյանի ծննդյան օրվա հանգամանքը («Առավոտ», թիվ 31), բայց նա հաճությամբ պատասխանեց նաեւ մեզ հուզող մի շարք հարցերի:

***-Ո՞վ էր ավելի պատրաստ 1888-ի ազգարթնացմանը՝ Սփյուռքը, թե՞ Հայրենիքը:***

-Մեր նորօրյա պայքարն սկիզբ առավ Հայրենիքեն: Մեր ապրած երկիրների մեջ չափեն ավելի հանգիստ է, չափեն ավելի բարեկեցիկ: Ամեն տեսակ բնականոն պայմաններուն մեջ ապրող մարդիկ են, իսկ նույն անունները կրող, մեր ազգին պատկանող մի ուրիշ հատված մեր պատմական Հայրենիքի մաս կազմող Արցախ աշխարհում ընկճված վիճակում էր, ուզում էին նրան ծնկի բերել, խեղդել: Այդ պատճառով էլ նա պայքարի ելավ: Սփյուռք ըսված իրականության մեջ ես ապրել եմ միշտ ամոթահար: Այն միտքը, թե սփյուռքն է հայությանը հայ պահում, սխալ է, որ տարածված է Մայր հայրենիքեն ներս: Հայությանը պահողը եղել է Հայաստանը այո, հենց Սովետական Հայաստանը, Արցախը, ուր 70 տարի խոսվել է մեր լեզուն, մեր մշակույթը, պատմությունն են կերտվել, ու մենք չենք ձուլվել: Սա է կարեւորը: Սփյուռքյան ժողովրդի ծանրակշիռ մեծամասնությունը ձուլված է արդեն, իրեն ոչ մի բանով հայ չի զգում: Սփյուռքի հայրենասիրությունը թվացյալ է: Առհասարակ, սփյուռքն ինքը խաբուսիկ երեւույթ է:

***-Կարելի՞ է ժխտել այն վիթխարի նյութական օգնությունը, որ տարբեր կազմակերպություններ, նաեւ՝ ձեր համախոհների հիմնադրած «Ինքնորոշված Արցախի օգնության միությունը», տրամադրել են երկրաշարժից եւ պատերազմից տուժածներին: Մանավանդ նրանցից բերած բժշկական նպաստը:***

–Ես շատ լավ եմ հիշում նախկին Սովետական Միության դեսպանատների դռները կոտրելու էինք գնացել Արցախի ձայնին մեր ձայնը միացնելու համար: 1000–ավոր երիտասարդներ էին զինվորագրվում, որ գան Արցախում կռվեն: Բայց նրանցից ոչ մեկը չեկավ եւ չի գալու:



***–Դուք ուզում եք փաստել սփյուռքի անտարբերությունը, բայց ինքներդ նրա մի մասնիկը չե՞ք:***

–Ես ամաչելուս համար եկա եկա Արցախ: Չէի ուզում ամոթահար ապրել:

***–Այսինքն եկան անհատները, ոչ թե կազմակերպությունները կամ նրանց կառույցները:***

–Ես գիտեմ սփյուռքի բոլոր կազմակերպությունները, բոլո՛ր կուսակցությունները: Կուզեմ ըսել, որ ոչ ոք իր հանգիստը չի թողնի գա Հայաստան, իր կյանքը չի դնի այս գործին մեջ: Եթե Սփյուռքը, իրոք, գոյություն ունի, թող օգնի Հայրենիքին եւ Արցախին: Ոչ ոք նրանից զենք չի ուզում, թող միայն հագցնեն բանակը, որ մեր ազգի, մեր պետության պահապանն է:

***–Եվ որի սպան եք դուք:***

–Ես արցախցի եմ ամեն ինչով փաստաթղթերով, գրանցումով: Արցախցի էի նաեւ մինչեւ գալս:

***–ԼՂՀ-ի Պաշտպանության բանակը, որ իր մարտունակությամբ ու արհեստավարժությամբ աշխարհի զարմանքն է շարժում, իսկ թշնամու՝ սարսափը...***

–ԼՂՀ-ի բանակը աշխարհում միակն է, որ «պաշտպանություն» բառով է բնութագրվում: Թող ողջ աշխարհը իմանա, որ մենք նվաճողական ոչ մի նպատակ չունենք, միայն ուզում ենք պաշտպանել այն, ինչ մերն է պատմականորեն, մշակութապես եւ իրավացիորեն: ԼՂՀ-ի Պաշտպանության բանակի կայացման հենասյունը սա է: Բայց այսօր թշնամին մեզ պարտադրել է, որ մենք բանակ կառուցենք եւ ուժի դիրքերից խոսենք իր հետ: Մեր բանակի ոգին այնքան է բարձր, այնքան է համառ, որ անպարտելի է: Ես այդ ասում եմ կենդանի վկա ըլլալով: Նա, ով չի հավատում, թող գա շնչե այս մաքուր օդը, խմե այս մաքուր ջուրը, քայլե այս հողին վրա եւ կտեսնե, որ այդ բոլոր մաքրությունները կբարձրացնեն իրենց ոգիները: Այս է Արցախը: Արցախն արդեն մեր պատմության մեջ մեր բոլորին ապտակող փաստն է: Բոլորը խոսում են ծովից ծով Հայաստան եւ այլն: Ես չեմ հավատում այդ բոլորին: Ես այսօրվա սերունդն եմ, ես ունեմ իմ պարտականությունս, իմ ինքնությունս եւ պիտի ծառայեմ այսօրվան Արցախին: Ես ուզում եմ հարց տալ մեր պապերին ինչո՞ւ մենք թողեցինք Վանը, Սասունը, ինչո՞ւ Արցախում միշտ հայություն է ապրել, ինչ է, նրա վրա հարձակում չի՞ եղել: Շատերը դա ուզում են բացատրել աշխարհաքաղաքական դիրքով, բարձունքներով: Ես ինքս եմ տեսել՝ Մուսալեռան բարձունքներն ավելի բարձր են, Սասունը եւս: Բայց այնտեղ՝ մենք պարտվել ենք: Դա անբացատրելի չէ. Արցախում մարդիկ հավատացել են, որ իրենց հողն են պաշտպանում: Ես այդ հասկացա վերջին մի քանի տարում: Պատերազմում ենք, որպեսզի խաղաղության հասնենք:

***–Սարգիս, մենք չխոսեցինք քո նկարահանած ինը ֆիլմի արցախյան առօրյայի մասին:***

–Այդ բոլորը պետք է տեսնել:

*–Ուրեմն՝ ցտեսություն:*

*Հյուրի հետ զրուցեց*
ՀՐԱՉՈՒՀԻ ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆԸ